ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԻՍԱԿՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02-«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բաբկենի Բոստանջյան
	տնտեսագիտության թեկնածու Արթուր Ռաֆայելի Թամազյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 7-ին, ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն 0009, ք.Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում :

Սեղմագիրն առաքված է 2013 թվականի հունիսի 6-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Եկամուտների արդարացի բաշխման խնդիրը գոյություն ունի մարդկության ողջ պատմության ընթացքում: Դարերի ընթացքում տնտեսագետների, քաղաքագետների ուշադրության կենտրոնում են եկամուտների անհավասարության, բաշխման, աղքատության հիմնահարցերը, որոնց հայեցակարգային լուծումների շուրջ բազմաթիվ մոտեցումներ, տեսակետներ, վարկածներ են առաջ քաշվել, սակայն դրանց լիարժեք լուծումները տալ չի հաջողվել դեռ ոչ մի պետության և լավագույն դեպքում ապահովվել է մարդկային բարձր զարգացվածություն, որին այժմ ձգտում են զարգացող բոլոր երկրները:

Եկամուտների բաշխման անհավասարության մեծացումը, ունեցվածքային շերտավորման մեծացումը, աղքատությունը և վերջին հաշվով՝ հասարակության մեջ սոցիալական անարդարության խորացումը Հայաստանի հասարակության մեջ առավել խորությամբ արտահայտվեցին անկախության տարիներին կամ 1990-ականների սկզբին, որոնք մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով լայն տարածում ստացան: 1988-1994թթ. տնտեսության վրա խիստ բացասաբար անդրադարձան երկրաշարժը, Խորհրդային միության փլուզումը և Ղարաբաղյան հակամարտությունը, առևտրային ուղիները փակվեցին, վերացվեցին ԽՍՀՄ հանրապետություններից ներկրվող էներգակիրների և այլ հումքի գծով սուբսիդիաները, Ռուսաստանի պահանջարկը հայկական ապրանքների նկատմամբ վերացավ, տրանսպորտային ծախսերը բարձրացան, իսկ հետագայում արդեն խզված կապերն ու շուկայական տնտեսությանն անցման դժվարությունները: Վերջիններիս ազդեցության հետևանքով նշված ժամանակաշրջանում Հայաստանի ՀՆԱ-ն 55%-ով անկում ապրեց, գործազրկությունն աճեց, իրական աշխատավարձերը (գնողունակությունը) ընկան, նվազեց պետական ծախսերի ծավալը, մեծացավ արտադրողական աշխատուժի զգալի մասի արտագաղթը: Բնակչության եկամտային անհավասարությունն արտացոլող Ջինիի գործակիցը 0.258-ից 1990-ական թթ. երկրորդ կեսին հասավ 0.59-0.60-ի, որի հետևանքով ՀՀ-ն դասվեց եկամտային անհավասարության բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում: 2004-2008թթ.-ին կայուն և բարձր տնտեսական աճը նախադրյալներ էր ստեղծում կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման համար: Այդ ժամանակահատվածում արձանագրված տնտեսական աճը նպաստել է իրական աշխատավարձի բարձրացմանը, զբաղվածության կայունացմանը և սոցիալական ծառայություններին ու տրանսֆերտներին ուղղվող բյուջետային ծախսերի ավելացմանը: Արդյունքում նվազել էր ընդհանուր և ծայրահեղ աղքատության մակարդակը: Սակայն, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հանգեցրեց նրան, որ 2009թ.-ից աճեց և՛ աղքատության մակարդակը, և՛ ծայրահեղ աղքատությունը՝ կազմելով համապատասխանաբար՝ 34.1% և 3.6%:

Սոցիալական անարդարության դրսևորումները նախադրյալներ են ձևավորում սոցիալական ու բարոյահոգեբանական խոր ճգնաժամի առաջացման համար: Վերջինս երկրում փոխում է ժողովրդագրական իրավիճակը, անցանկալի տեղաշարժեր

առաջացնում արտագաղթի, մարդկային կապիտալի վերարտադրության տեսանկյուններից, որոնք խոչընդոտում են մարդկային, հետևաբար և տնտեսության զարգացմանը: Այս համատեքստում առաջնային նշանակություն է ստանում բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման հիմնախնդիրը:

ՀՀ բնակչության դրամական եկամուտների ձևավորման, դրանց բաշխման հիմնահարցերին իրենց մենագրություններում ու աշխատություններում անդրադարձել են ակադեմիկոսներ ու պրոֆեսորներ՝ Գ.Ա. Ղարիբյանը, Յու.Մ. Սուվարյանը, Վ.Լ. Հարությունյանը, Հ.Բ. Ղուշչյանը, Բ. Հ. Եղիազարյանը, Ա.Խ. Մարկոսյանը և այլոք:

Եկամուտների արդարացի բաշխման խնդիրի լուծմանը միշտ էլ փորձ է արվել տալ յուրահատուկ մոտեցումներ, սակայն մինչև այսօր չկա դրա լուծման մեկ ընդհանրական մոտեցում, որում կտրվեն եկամուտների բաշխման այն ձևերը, որոնք կիրառելով ՀՀ-ում կապահովվի սոցիալական կայունություն և կձևավորվի միջին խավ: Այնուհանդերձ, պետք է փորձել գտնել բնակչության եկամուտների արդարացի բաշխմանն ուղղված արդյունավետ կառավարման մեխանիզմներ, իրականացնել հստակ մշակված կառուցվածքային բարեփոխումներ և ապահովել մշակված ռազմավարությունների իրագործումը: Այս համատեքստում մեր հիմնական խնդիրը բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման հիմնահարցերն են և դրանց լուծման կատարելագործման ուղիները, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը բնակչության դրամական եկամուտներն են, դրանց արդարացի բաշխման անհավասարության պատճառները, գնահատման եղանակները, աղքատությունը և հաղթահարման պետական քաղաքականության ուղիները, իսկ առարկան՝ բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման հիմնախնդիրներն են և դրանց լուծման ուղիներն ու մեխանիզմները ՀՀ-ում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել ՀՀ բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման հայեցակարգային և մեթոդաբանական հիմնախնդիրները, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկել արդյունավետ բաշխման և սոցիալական արդարության ապահովման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր, ինչպես նաև ուսումնասիրելով դրամական եկամուտների բաշխման միտումները, ներկայացնել առաջարկություններ արդարացի բաշխման քաղաքականության իրագործման ուղղությունների վերաբերյալ:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել և իրենց լուծումն են ստացել հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել եկամուտ հասկացությունը, ներկայացնել դրա տարբեր մեկնաբանությունները և բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները,
- առավել համապարփակ ներկայացնել բնակչության եկամուտների բաշխման տեսությունները և ձևերը,

- ներկայացնել սոցիալական արդարության վերաբերյալ գոյություն հայեցակարգերը և տեսությունները՝ ժամանակակից տնտեսական զարգացումների համատեքստում,
- ներկայացնել բնակչության դրամական եկամուտների անհավասարության գնահատման եղանակները, ինչպես նաև վերլուծել ՀՀ բնակչության եկամուտների անհավասարության պատճառները,
- վերլուծել ՀՀ բնակչության դրամական եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնահարցերը՝ եկամուտների քվինտիլային և դեցիլային բաշխման համատեքստում,
- ներկայացնել ՀՀ-ում բնակչության դրամական եկամուտների բաշխման սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղղությունները, ինչպես նաև պետական կարգավորման ուղիները, լծակները և մեխանիզմները:

Ատենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության և կառավարման դասական ու ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, դոկտրինաներն ու հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները, բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման բնագավառում իրականացված բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից այս բնագավառում կատարած ուսումնասիրությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և արտասահմանյան երկրների օրենքներն ու իրավական ակտերը, ՀՀ կառավարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, միջազգային կազմակերպությունների (Միացյալ ազգերի կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) հրապարակումները և պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական վերլուծության, խմբավորումների և համեմատական վերլուծությունների մեթոդներ և այլն:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ դրույթներում.

- Եկամուտ կատեգորիայի տարբեր մեկնաբանությունների հիման վրա տրվել է վերջինիս ըմբռնման յուրովի մոտեցում՝ «Եկամուտը՝ շուկայական տնտեսության պայմաններում մարդու ֆիզիկական, բարոյական, զգացմունքային ու ինտելեկտուալ հնարավորությունների օգտագործման շնորհիվ ստեղծված վերջնական արդյունքի գնահատականն է՝ դրամական և բնեղեն արտահայտությամբ, որն օգտագործվում է տնային տնտեսությունների կողմից սպառման և խնայողությունների (ներդրումների) նպատակով՝ սեփական բարեկեցության բարձրացման համար»:
- Հիմնավորվել են ՀՀ-ում բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման համար անհրաժեշտ սոցիալական քաղաքականության կատարելագործման

ուղղությունները՝ զուտ եկամուտների խմբային բաշխվածության պետական կարգավորման արդյունավետ մեխանիզմների կիրառման համատեքստում:

- Վերլուծելով ՀՀ բնակչության դրամական եկամուտների անհավասարության պատճառները եկամուտների քվինտիլային և դեցիլային բաշխման համատեքստում՝ հիմնավորվել է անհավասարաչափ բաշխվածությունը մեղմելու համար առանձին դեցիլային և քվինտիլային խմբերում, նպատակային քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը:
- Մշակվել է եկամուտների արդարացի բաշխման սկզբունքներն արտացոլող կառուցակարգ, որտեղ մակրոմակարդակից մինչև միկրոմակարդակ ներկայացվել են արդարացի բաշխում ապահովելու համար անհրաժեշտ հաջորդական և կապակցող գործընթացները:

Ատենախոսությունում ներկայացված արդյունքները տարբերվում են իրենց մոտեցումներով, առաջարկություններով, ընդգրկված հարցերի շրջանակներով և համակարգվածությամբ, որով էլ պայմանավորված է ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական արդյունքների նշանակությունը կայանում է նրանում, որ մշակված գիտատեսական ընդհանրացումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների (ՀՀ կառավարության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների նախարարությունների և այլն) կողմից բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխմանը նպաստող հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու գործընթացներում, ինչպես նաև մի շարք դրույթներ կարող են օգտագործվել ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխման հիմնախնդիրների լուծման, աղքատության նվազեցման, հատկապես ծայրահեղ աղքատության կրճատման ռազմավարության մշակման գործընթացներում:

Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել բնակչության դրամական եկամուտների բաշխման հիմնախնդիրներով զբաղվող տնտեսագետների և սոցիալական ոլորտի կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված չորս գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 137 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացված են հետազոտության նպատակները, խնդիրները, ձևակերպված են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, գիտական արդյունքները և նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ներկայացված է ուսումնասիրության մեթոդաբանությունը, ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին «Բնակչության եկամուտները և սոցիալական արդարության մեթոդաբանական հիմնահարցերը» գլխում ուսումնասիրվել են բնակչության եկամուտների հասկացությունը, մեկնաբանությունները և ձևավորման աղբյուրները, ինչպես նաև քննարկվել են բնակչության եկամուտների բաշխման տեսությունները, ձևերը և սոցիալական արդարության հայեցակարգերը՝ ժամանակակից տնտեսական զարգացումների համատեքստում:

«Եկամուտ» հասկացությունը բավականին բարդ ու լայն իմաստ ունի: Դրա բնորոշմանն անդրադարձել են տարբեր տնտեսագետներ: Ընդհանուր բնորոշմամբ տնտեսագիտական գրականությունում «եկամուտ» հասկացությունը կիրառվում է որպես արտադրված արտադրանքի արժեքի գերազանցում այդ արտադրանքի արտադրության ծախքերի, ինչպես նաև արտադրված արտադրանքում յուրաքանչյուր դասակարգի, սոցիալական խմբի կամ առանձին անհատի կողմից որպես հատուցում, յուրացված բաժին[1]: Շուկայական տնտեսությունում եկամուտն անհատի կամ ընտանիքի հնարավորությունները գնահատող ամենակարևոր ցուցանիշն է: Այն իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության արդյունքների դրամական արտահայտության ցուցանիշ: Մարդու համար եկամուտ կարող է հանդիսանալ այն ամենը, ինչը նա ստանում է փողի տեսքով, կամ էլ այն, ինչը ենթակա է հարկման: Եկամուտը շուկայական տնտեսության յուրաքանչյուր մասնակցի գործողությունների վերջնական նպատակն է և խթանը:

Ամբողջացնելով «եկամուտ» կատեգորիային առնչվող սահմանումները, տարբեր տեսանկյուններից տրված մեկնաբանությունները փորձենք տալ մեր բնորոշումը կամ սահմանումը. «Եկամուտը՝ շուկայական տնտեսության պայմաններում մարդու ֆիզիկական, բարոյական, զգացմունքային ու ինտելեկտուալ հնարավորությունների օգտագործման շնորհիվ ստեղծված վերջնական արդյունքի գնահատականն է՝ դրամական և բնեղեն արտահայտությամբ, որը օգտագործվում է տնային տնտեսությունների կողմից սպառման և խնայողությունների (ներդրումների) նպատակով՝ սեփական բարեկեցության բարձրացման համար»:

Ատենախոսության տեսական հարցադրումների մեջ ուսումնասիրել ենք բնակչության դրամական և բնաիրային, անվանական և իրական, ինչպես նաև վերջնական եկամուտները: Անդրադարձնել ենք նաև սեփական, սեզոնային, տնային տնտեսության, գործոնային, աշխատանքային և ոչ աշխատանքային եկամուտներին և այն:

---

[1] Գևորգյան Մ.Ա., Տնտեսագիտության տեսություն: Երևան, Ա. հ., 1997, էջ 240:

Եկամուտների բաշխման տեսություններն ուսումնասիրել ենք դրանց ձևավորումից մինչև մեր օրերն ընկած մոտեցումների տեսանկյունից: Քննարկել ենք ֆիզիոկրատ Ֆ. Քենեի (1694-1774թթ.) բաշխման հարցերի ուսումնասիրությունը[2], անգլիական դասական դպրոցի ներկայացուցիչներ Ա. Սմիթի (1723-1790թթ.), Դ. Ռիկարդոյի (1772-1823թթ.) և Ջ. Ս. Միլի (1806-1873թթ.) մոտեցումները եկամուտների բաշխվածության շուրջ:

Կարևոր ենք համարել նաև անդրադառնալ Ժ.Բ. Սեյի, սոցիալական բաշխման տեսության հիմնադիր տեսագետ Ա. Մարշալի քննադատական մոտեցումներին, Հ.Չ. Քերինի (1793-1879) բաշխման օրենքին, ֆրանսիացի տնտեսագետ Ժ. Սիսմոնդիյի (1773-1842թթ.) եկամուտների մասին ուսմունքին և այլն:

Մարքսիզմի տեսության շրջանակներում վերլուծել ենք տնտեսագիտության տեսության մեջ առաջին անգամ բացահայտված բաշխման ու արտադրական հարաբերությունների միասնությունը:

Մարժինալիզմի ամերիկյան դպրոցի հիմնադիր Ջ.Բ. Կլարկի (1847-1938թթ.) հիմնական աշխատություններից անդրադարձել ենք «Հարստության բաշխմանը» (1888թ.), ինչպես նաև Վ. Պարետոյի (1848-1923) կողմից շրջանառության մեջ դրված «Եկամուտների բաշխման օրենքին» և այլն:

Ժամանակակից տեսաբանների գաղափարներից փորձել ենք ներկայացնել այն հեղինակներին, որոնք նոր մոտեցումներով են ներկայացրել գոյություն ունեցող առանձին տեսությունները: Օրինակ՝ Լուիջի Պասինետին (Luigi Pasinetti) մի շարք նոր մոտեցումներ է առաջարկում «բաշխման դասական տեսության» մեջ, Մաուրո Բարանզինին (Mauro Baranzini) ներկայացրել է «քեյնսյան բաշխման տեսության» ժամանակակից մոտեցումները, բաշխման նեոդասական դպրոցն է ներկայացնում Քրիստոֆեր Բիլսը և այլն: Իրենց հոդվածներում բաշխման, եկամտային անհավասարության հարցերին են անդրադառնում՝ Ջ.Ե. Ռոմերը (J.E. Roemer), ազգային եկամտի բաշխմանն է անդրադառնում Թոմաս Կ. Ռիմեսը (Thomas K. Rymes), աշխատավարձերի անհավասարության հիմնահարցերով իրենց մոտեցումներն են առաջարկում Ստեֆան Մաչին և Ջոն Վան Ռինեն (Stephen Machin և John Van Reenen) և այլն:

Տնտեսագիտության մեջ սոցիալական արդարության և եկամուտների արդարացի բաշխման հայեցակարգերից քննարկել ենք՝[3]

1. Հավասարարական (էգալիտարիստական)[4] սկզբունքը:
2. Օգտապաշտական (ուտիլիտարիստական) սկզբունքը:
3. Լիբերալիստական (բարեհոգապաշտական) կամ ռոուլսյան մոտեցումը:
4. Լիբերտարիանիզմի տեսությունը:
5. Եկամուտների բաշխման սոցիալիստական եղանակը:

---

[2] Франсуа Кэне., Избранные экономические произжедения. Издательство социально экономической литератури. Москва 1960, с. 200.

[3] Курс экономической теории, под. ред. Чепурина М.Н., М.: 2002, с. 542-547.

[4] Якобсон Л.И., Экономика общественного сектора: Основы теории государственных финансов: Учебник для вузов, -М.: Аспект Пресс, 1996, с. 86.

6. Եկամուտների շուկայական բաշխման սկզբունքը:

7. Սոցիալական արդարության ժամանակակից ըմբռնումները:

Ծագումով ռուս, ամերիկացի տնտեսագետ Վ. Լեոնտևը գրել է, որ եթե հասարակության բոլոր անդամներն ունենային ընտրության և որոշումներ կայացնելու հավասար հնարավորություններ, եթե բոլորը լինեին միաժամանակ աշխատողներ ու գործատուներ, խնայողներ ու ներդրողներ, ֆերմերներ ու քաղաքացիներ, բաշխման խնդիրը չէր սպառնա [5]:

Սոցիալական արդարության հայեցակարգերը փոփոխությունների են ենթարկվում պայմանավորված վերջին տնտեսական զարգացումների հետ: Այս համատեքստում ԵՄ և աշխարհի մի շարք երկրներ ստիպված են վերանայել իրենց սոցիալական արդարության մոտեցումները, քանի որ ընդլայնողական ծախսային քաղաքականությունն առաջացրել է մի շարք երկրների բյուջեներում մեծ պակասուրդ, իսկ աճող սոցիալական պարտավորությունները և կրճատվող հարկերը թույլ չեն տալիս պետական կառավարման մարմիններին կատարել իրենց պարտավորությունները: Համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի անկման երևույթները խիստ բացասական կարող են անդրադառնալ ԵՄ երկրների վրա, իսկ վերջինիս պարտքային ճգնաժամի ճիրաններում հայտնվելը ստիպում է բարձրացնել կենսաթոշակների վճարման տարիքը, կրճատել կենսաթոշակների չափը և այլն, որը և առաջացնում է մի շարք դժգոհություններ: Այս զարգացումները տանելու են նրան, որ խախտվելու է սերունդների համերաշխության սկզբունքը և եկող սերունդներն ապրելու են ավելի վատ, քան նախկինները:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնակչության դրամական եկամուտների անհավասարության, աղքատության և բաշխման հիմնահարցերի վերլուծությունը ՀՀ-ում» գլխում ներկայացվել են բնակչության դրամական եկամուտների անհավասարության գնահատման եղանակները և պատճառների վերլուծությունը ՀՀ-ում, ինչպես նաև տրվել է եկամտային աղքատության իրավիճակի նկարագիրը և բնակչության դրամական եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնահարցերի վերլուծությունը ՀՀ-ում:

Հետաքրքիր է այն փաստը, որ 2012թ.-ի տնտեսագիտության բնագավառում տրվող Նոբելյան մրցանակի հինգ հավակնորդների թվում էին Էնտոնի Ատկինսոնը և Էնգուս Դիտոն[6] Օքսֆորդի և Պրինստոնի համալսարաններից, որոնց հնարավոր էր մրցանակ տրվեր եկամուտների, սպառման և բարեկեցության վերաբերյալ նրանց կատարած աշխատանքների համար: Այս երկու հեղինակները հանդիսանում են եկամուտների սոցիալ-տնտեսական հետևանքների հստակ չափողականության աշխատանքի համահեղինակներ: Վերջինս ցույց է տալիս, որ եկամուտների բաշխման և դրանց սոցիալ-տնտեսական բազմագործոնային կապերի բացահայտումը գտնվում է նաև

---

[5] Слагода В.Г., Основы экономики: Учебное пособие для студентов учреждений среднего профессионального образования. -Н.: Форум: ИНФРА-М, 2002, с. 112.

[6] http://www.vestifinance.ru/articles/18369

Նոբելյան հանձնաժողովի, ինչպես նաև համաշխարհային մի շարք հեղինակավոր տնտեսագետների ուշադրության կենտրոնում:

Հայաստանում 2009թ.-ին սպառման անհավասարությունն ավելացել է՝կազմելով 0.257՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ, 2010թ.-ին այն կազմել է 0.265, իսկ 2011թ.-ին՝ 0.267: Ըստ եկամուտների գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ անհավասարությունն ավելացել է՝ 2011թ.-ին կազմելով 0.367, 2008թ.-ի՝ 0.339-ի համեմատ: Եկամուտների անհավասարության գնահատման Թեյլի էնտրոպիայի համաթիվը և Թեյլի միջին լոգարիթմական շեղումն արձանագրել են, որ 2008-2011թթ.-ին Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի և ըստ սպառման ցուցանիշի ավելացել է:

Աղյուսակ 2.1

Սպառման և եկամուտների անհավասարությունը, 2008- 2011թթ.[7]

	Սպառում			Եկամուտ		
	2008	2010	2011	2008	2010	2011
Վարիացիայի գործակից	0.592	0.775	0.762	0.847	2.410	1.115
Ջինիի գործակից	0.242	0.265	0.267	0.339	0.362	0.371
Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0)	0.096	0.119	0.120	0.201	0.227	0.247
Թեյլի էնտրոպիա E(1)	0.110	0.152	0.151	0.215	0.308	0.280

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008, 2010, 2011թթ.*

Էական փոփոխություններ կան նաև 20% ամենաապահով և 20% ամենաաղքատ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցության մեջ:

Աղյուսակ 2.2

20 տոկոս ամենաապահով և 20 տոկոս ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2011թթ.[8]

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ըստ դրամական եկամուտների	10.6 անգամ	9.5 անգամ	7.6 անգամ	8.0 անգամ	7.8 անգամ	8.0 անգամ	8.0 անգամ	8.0 անգամ
Ըստ սպառողական ծախսերի	5.8 անգամ	6.0 անգամ	5.4 անգամ	5.6 անգամ	5.2 անգամ	5.1 անգամ	5.2 անգամ	5.4 անգամ

Համաձայն վիճակագրական տվյալների ՀՀ-ում 2009-2011 թվականներին՝ 2008թ.-ի համեմատ ավելացել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը՝ 7.8 անգամից հասնելով 8.0 անգամի, 2009թ.-ին 2004թ.-ի համեմատ նվազել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը՝ 10.6 անգամից հասնելով 8.0

[7] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց/ՀՀ ԱՎԾ.: Համաշխարհային բանկ. Երևան: Բավիղ, 2012, էջ 77:

[8] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց/ ՀՀ ԱՎԾ.: Համաշխարհային բանկ.Երևան: Բավիղ, 2012, էջ 135:

անգամի: 1996 թվականի տվյալներով առավել հարուստ և առավել աղքատ խավերի 20%-ի եկամուտների հարաբերակցությունը 32 էր, իսկ երբ այդ թիվն անցնում է 30-ից՝ երկիրը սոցիալական առումով համարվում է պայթունավտանգ: 2003 թվականին տվյալ ցուցանիշն իջել է 17-ի[9]:

Բևեռային եկամուտների կամ ծախսերի «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցն ավելի ցայտուն է, քան քվինտիլային հարաբերության գործակիցը: 2010թ.-ին այդ հարաբերակցությունը, ըստ սպառողական ծախսերի կազմել է 8.1 անգամ, իսկ ըստ բնակչության դրամական եկամուտների՝ 14.2 անգամ:

Աղյուսակ 2.3

10 տոկոս ամենաապահով և 10 տոկոս ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2011թթ. [10]

	10% ամենաապահով և 10% տոկոս ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցություն						
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Ըստ դրամական եկամուտների	20.8 անգամ	17.9 անգամ	13.9 անգամ	15.6 անգամ	14.1 անգամ	14.5 անգամ	14.2 անգամ
Ըստ սպառողական ծախսերի	9.5 անգամ	10.0 անգամ	8.7 անգամ	8.9 անգամ	8.0 անգամ	7.9 անգամ	8.1 անգամ

Հայաստանում 2008-2011թթ. տարեկան միջին գներով արտահայտված աղքատության գծերը ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Աղյուսակ 2.4

Աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2008-2011թթ.-ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար[11]

(դրամ)

Աղքատության գծերը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17644	17483	19126	21306
Աղքատության ստորին ընդհանուր գիծ	24388	25217	27410	29856
Աղքատության վերին ընդհանուր գիծ	29903	30920	33517	36158

Աղբյուրը. *2008-2011թթ. ՏՏԿԱՀ*

2009թ.-ին 1998թ.-ից հետո աղքատության մակարդակն առաջին անգամ աճել է՝ պայմանավորված Հայաստանի տնտեսության 14.1% անկմամբ: ՀՀ-ում աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին ընդհանուր գծից, շատ աղքատ են գնահատվել նրանք, ում

---

[9] Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Հարցեր և պատասխաններ: Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն, -Եր., Տոներ, 2004, էջ 9:

[10] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց/ԱՎԾ.: Երևան, Բավիղ, 2012, էջ 135:

[11] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական–վերլուծական զեկույց/ՀՀ ԱՎԾ.: Համաշխարհային բանկ. Երևան: Բավիղ, 2010, էջ 214: Նույնը, Երևան, Բավիղ, 2012, էջ 54:

սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից: 2010թ.-ին 2008թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակը բավականին աճել է և կազմել 35.8% արձանագրված 27.6%-ի դիմաց:

2004թ.-ին աղքատների թվաքանակը կազմել է 34.6% և կրճատվել է 21.5%-ով 1998/99թ.-ի 56.1%-ի համեմատությամբ, իսկ 2007թ.-ին աղքատների թվաքանակը զգալիորեն կրճատվել է, 1998/99թ.-ի համեմատությամբ մոտ 2.2 անգամ: Նվազման միտումը մեծ է նաև ծայրահեղ աղքատության ցուցանիշի գծով: 2007թ.-ին ծայրահեղ աղքատությունը 1998/99թ.-ի համեմատությամբ նվազել էր մոտ 5.5 անգամ: Մինչդեռ 2010թ.-ին աղքատության ցուցանիշները զգալիորեն աճել են:

Այսպիսով՝ աղքատության առանձին ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ վնաս հասցրեց ՀՀ տնտեսությանը, դրանով իսկ ազդելով նաև աղքատության մակարդակի աճի վրա, որն արտահայտվեց նաև ծայրահեղ աղքատության աճով:

2008թ.-ի հոկտեմբերին ՀՀ կառավարությունը փորձ էր արել ԱՀՌԾ-2-ից անցում կատարել Կայուն զարգացման ծրագրին, սակայն ինչպես ցույց տվեցին ապագա տնտեսական զարգացումներն այդ ծրագիրը նախանշված չէր կյանքի կոչվելու համար և այն մնաց թղթի վրա: Սա փաստում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը սկզբնական շրջանում չի էլ կանխատեսել մոտեցող ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունների մասին: Այժմ քննարկման և մշակման փուլում է ԱՀՌԾ-3-ը, որը կարելի է ասել կլինի նախկին միտումներին և ցուցանիշներին հասնելուն ուղղված ծրագիր: Ամենալուրջ խնդիրն այստեղ մնում է այն, որ Հայաստանի տնտեսության համար վերջին 4 տարիներն այնքան էլ բարենպաստ չէին և տնտեսական աճի դանդաղ տեմպերի պատճառով կվտանգվի նաև արագ տեմպերով աղքատության կրճատումը:

Նախ և առաջ՝ անհրաժեշտ է առաջին անհրաժեշտության ապրանքների և դեցիլային 1-ից 4-րդ խմբերի հիմնական սպառողական ապրանքների գների նկատմամբ հատուկ գնային ցածր քաղաքականության մշակում և իրագործում՝ պարենային ապահովության և անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացման համատեքստում:

Պետական քաղաքականությունը եկամուտների բաշխվածության բնագավառում համապատասխան հարկային մեխանիզմներ կիրառելու միջոցով, այն է՝ հնարավորինս արտոնյալ պայմաններ սահմանի առաջինից 4-րդ դեցիլային կամ ստորին երկու քվինտիլների համար: Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ բնակչության աղքատ խավի կամ ստորին 40%-ի համար բավականին դժվարին իրավիճակ է ստեղծվել, որի կարգավորումը հնարավոր է միայն հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետ մեխանիզմներ կիրառելու միջոցով:

Ատենախոսության երրորդ՝ «Բնակչության դրամական եկամուտների բաշխման գործընթացի կատարելագործման ուղղությունները ՀՀ-ում» գլխում ներկայացվել են

բնակչության դրամական եկամուտների անհավասարաչափ բաշխմանն ուղղված սոցիալական քաղաքականության կատարելագործմանն ուղղությունները ՀՀ-ում, ինչպես նաև ներկայացվել են բնակչության դրամական եկամուտների բաշխման բարելավման պետական կարգավորման ուղիները ՀՀ-ում:

Սոցիալական քաղաքականությունը եկամուտների բաշխման տեսանկյունից վերջին ժամանակներում ուսումնասիրել են մի շարք տնտեսագետներ, քանի որ այս հիմնահարցն առավել սրությամբ սկսեցին արտահայտվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում և հետճգնաժամային զարգացման տարիներին նույնպես: Սոցիալական քաղաքականության վերանայման խնդրի առաջ կանգնեցին մի շարք երկրներ, որոնք ստիպված էին ամբողջական պահանջարկի խթանման կամ ընդլայնողական բյուջետային քաղաքականության անցնել՝ դրանով իսկ փորձելով պահպանել նախկին սպառման ծավալները:

Հաշվի առնելով ՄԱԿ-ի Աղքատության և սոցիալական ազդեցության խմբի (2010թ.), PFA-ի (2008թ.)[12], Գյուլումյանի (2009թ.)[13] և Քանագարաջահի (2010թ.) կողմից դիտարկվող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դեպի Հայաստան փոխանցման մեխանիզմները (բացառությամբ ՕՌԻՆ-ի փոխանցման մեխանիզմի), պետք է նշել, որ այդ մեխանիզմներն իրենց ուղղակի և անուղղակի ազդեցությունն են թողել ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների միտումների փոփոխության վրա:

Հայաստանում 2008-2009թթ. ճգնաժամի սոցիալական ազդեցության հիմնահարցերին տարբեր հեղինակներ անդրադարձել են մի շարք վերլուծություններում և զեկույցներում՝ ՀՊԾ-ի պարենային անվտանգության վերլուծությունը (2009թ.)[14], ՀԲ-ի կողմից պատրաստված զեկույցը (2010թ.), UNDP-ի կողմից ստացված աջակցության շնորհիվ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից պատրաստված զեկույցը (2010թ.), և այլն: Սակայն այդ զեկույցներում շատ դեպքերում խորությամբ չեն ներկայացվում եկամուտների բաշխվածության հարցում առաջացած փոփոխությունները, կամ որ ավելի կարևոր է յուրաքանչյուր դեցիլային կամ քվինտիլային խմբին ուղղված նպատակային քաղաքականությունը:

Եկամուտների փոփոխությունն իր հերթին հանգեցնում է նրան, որ տնային տնտեսությունները ճգնաժամի հաղթահարման տարբեր ռազմավարություններ են որդեգրում, ինչն էլ բերում է տնային տնտեսությունների անդամների առողջության և կրթության մակարդակի անկման և մի շարք այլ ուղղակի ածանցյալ սոցիալական ազդեցությունների:

---

[12] UNDP. (2010), Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies, New York, USA: United Nations Development Program.

[13] Gyulumyan, Gohar (2009), "ARMENIA: Social Impact of the Global Economic Crisis", presentation prepared for AIPRG international Conference on Impact of the Global Crisis on Armenia: Short- and Long-run Perspectives, Armenia: Yerevan. July 7-8. http://www.econarm.com/AIPRG_2009_Conference/3rd_session/Gohar_Gyulumyan.ppt.

[14] WFP Food Security Analysis, (2009). Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Yerevan: WFP Armenia.

Այս ամենը հաշվի առնելով պետական կառավարման մարմիններն ի դեմս ՀՀ կառավարության սկսեցին մշակել և իրականացնել մի շարք սոցիալական ծրագրեր, որոնք պետք է ուղղվեին բացասական զարգացումների կանխմանը:

Պետք է նշել, որ ՀՀ-ում նպաստներն ու կենսաթոշակները էական գործոն են հանդիսանում բնակչության դրամական եկամուտների կազմում: ՀՀ ընդհանուր ընտանիքների կազմում նպաստառու ընտանիքները 2007թ.-ին կազմել են 16.24%, իսկ արդեն 2011թ.-ին այդ թիվը մոտեցել է 11.77%-ի, այսինքն՝ ունենք նպաստառու ընտանիքների թվի մոտ 5 տոկոսանոց կրճատում[15]:

Մյուս խնդիրը կապված է կենսաթոշակների հետ, որը գրեթե միշտ դիտարկվում է նպաստների հետ նույն հարթության վրա: Հայաստանում 2009թ.-ի գրանցված կենսաթոշակառուները կազմել են 523839 մարդ, իսկ 2011թ.-ին 509312 մարդ, այս մարդիկ 2011թ.-ի դրությամբ ստացել են ամսեկան 27062 դրամ: Սոցիալական կենսաթոշակները Հայաստանում 2011թ.-ի դրությամբ կազմել են 13182 դրամ, իսկ ստացողների թիվը՝ 51294 մարդ, ի դեպ այս ցուցանիշն ունի աճի միտում[16]:

ՏՏԿԱՀ գնահատականները, որոնք առնչվում են մյուս եկամուտների խմբին, ցույց են տալիս, որ սոցիալական տրանսֆերտները նպաստում են սպառման բաշխվածության միջև անհավասարության նվազեցմանը: Սպառման ագրեգատի բաշխվածության նախատրանսֆերտային Ջինիի գործակիցը 2010թ. դրությամբ նվազում է 0.359-ից՝ կազմելով 0.282, իսկ 2011թ.-ին 0.357-ից մինչև 0.280, երբ սպառման ագրեգատին ավելացվում են կենսաթոշակները, իսկ բոլոր սոցիալական տրանսֆերտների ավելացմամբ սպառման անհավասարությունը կրճատվում է մինչև 0.265 և 0.267:

Զուտ եկամտի չափի վերլուծությունից նկատում ենք, որ 913.6 հազար զբաղվածներից 122.5 հազարը ստանում է 30 հազար դրամից ցածր եկամուտներ, զբաղվածների 325.5 հազարը, որն, ի դեպ, ամենամեծ խումբն է ստանում է ընդամենը 30-60 հազար դրամ, մյուս խոշոր խումբը կազմում է 60-100 հազար դրամ ստացողները, որոնք թվով 283.2 հազար են, այսինքն՝ 730 հազար մարդ ստանում է 100 հազար դրամից պակաս եկամուտ, որը կարելի է խիստ ահազանգող համարել, քանի որ նման գումարներով ապահովել սեփական ընտանիքի գոյությունը բավականին բարդ է: 100 հազար դրամից մինչև 250 հազար դրամ ստացողները կազմում են 166 հազար զբաղված, իսկ 250-ից 300 հազար դրամ և ավելի ստացողների թիվը չի գերազանցում 18 հազար զբաղվածը: Զուտ եկամտի նման բաշխվածությունը փաստում է այն մասին, որ գոյություն ունի եկամուտների խիստ տարբերակվածություն, որն արտահայտվում է նաև տնտեսության առանձին ճյուղերում:

Այս համատեքստում, տնտեսության յուրաքանչյուր ոլորտից ելնելով, ինչպես նաև տվյալ ոլորտում ստացվող զուտ եկամուտների բաշխվածության խմբեր կազմելով

---

[15] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց/ ՀՀ ԱՎԾ.: Համաշխարհային բանկ.: Երևան, Բավիղ, 2012, էջ 7:

[16] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց/ ՀՀ ԱՎԾ.: Համաշխարհային բանկ. Երևան: Բավիղ, 2012, էջ 244:

(դեցիլային և քվինտիլային), անհրաժեշտ է իրականացնել բազմագործոնային վերլուծություն, որից հետո նպատակային քաղաքականություն մշակել յուրաքանչյուր եկամտային խմբի համար՝ ելնելով տվյալ ոլորտի առանձնահատկություններից: Այս մոտեցումը հնարավորություն կտա եկամուտների արդարացի բաշխման համակարգում ունենալ պետական նպատակաուղղված քաղաքականություն, ինչպես նաև հստակ մեխանիզմներ՝ 100 հազար դրամից ցածր եկամուտներ ունեցող մոտ 730 հազար զբաղվածի նկատմամբ հստակ մշակված կատարելագործման սոցիալական քաղաքականություն կիրառելու տեսանկյունից:

Ազգային հաշիվների համակարգում եկամուտների ձևավորմանը հաջորդում է սկզբնական եկամուտների բաշխման գործընթացը, իսկ վերջինիս էլ հաջորդում է եկամուտների երկրորդային բաշխումը: Այս երկու փուլերի ընթացքում տնտեսության մեջ ձևավորված եկամուտները սկսում են բաշխվել, իսկ այնուհետև վերաբաշխվել առանձին սուբյեկտների կամ տնտեսության հինգ հատվածների միջև: Այդ իսկ պատճառով տնտեսության մեջ եկամուտների բաշխվածության ճիշտ պետական քաղաքականությունը մակրո մակարդակում պետք է սկսել իրագործել սկզբնական և երկրորդային բաշխման հաշիվների առանձին ցուցանիշների ազդակներից և դրանց վրա նպատակաուղղված ազդեցությունից ելնելով:

Հայաստանում սկզբնական եկամուտների բաշխվածության գլխավոր ցուցանիշը՝ տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները 2010թ.-ին կազմել են 1734.4 մլրդ դրամ, որը 2006թ.-ի նկատմամբ աճել է մոտ 385 մլրդ դրամով: ՀՀ տնտեսության մեջ ձևավորված տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները օգտագործվում են գումարներ արտերկիր փոխանցելու համար, որն ի դեպ 2011թ.-ին կազմել է 232.1 մլրդ դրամ, և դա լուրջ կապիտալի արտահոսք է դիտվում որպես, և դրա մեջ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը կազմել է 55.3 մլրդ դրամ, իսկ սեփականությունից եկամուտները՝ 176.8 մլրդ դրամ:

Վերջինս փաստում է այն մասին, որ մինչև համախառն ազգային եկամտի ձևավորումը Հայաստանից բավականին գումարներ արտահոսում են, իսկ այդ գումարների արտահոսքը ոչ թե նվազման այլ աճի միտում ունի:

Ազգային հաշիվների համակարգում եկամուտների սկզբնական և երկրորդային եկամուտների բաշխման ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան մի շարք հնարավորություններ եկամուտների բաշխման արդյունավետ քաղաքականություն ունենալու համար: Մեր կողմից առաջարկվող մոտեցումները հիմնվում են առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների վրա, քանի որ Հայաստանի տնտեսության մեջ առկա ներքին ռեսուրսները լիարժեք չեն օգտագործվում, որի արդյունքում արտերկիր է արտահոսում սեփականությունից ստացված եկամուտների հսկայական զանգված, որը նպաստավոր պայմանների դեպքում կմնար Հայաստանում և կներդրվեր տնտեսության առանձին ոլորտներում:

Գծապատկեր 3.1

Եկամուտների բաշխման մեխանիզմներն ու սկզբունքները (առաջարկվող)



Այս առումով իրենց կարևորությունն են ստանում արդյունավետ հարկաբյուջետային, ներդրումային արտաքին առևտրային քաղաքականությունների մեխանիզմների մշակումը և դրանց իրագործումը, քանի որ այս քաղաքականություններից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել տնտեսության մեջ եկամուտների անհավասարաչափ բաշխվածության, և մյուս կողմից ինչո՞ւ չէ նաև անհավասարաչափ բաշխվածությունը մեղմելու հնարավորություն ընձեռող կապիտալի արտահոսքի կանխման:

ՀՀ-ի համար փորձել ենք նաև ներկայացնել եկամուտների արդար բաշխման գծապատկերը՝ ելնելով ազգային հաշիվների համակարգում եկամուտների ձևավորումից մինչև եկամուտների տնօրինում շղթայի հաջորդական քայլերի մեխանիզմի վրա: Կարելի է ասել, որ այս համակարգը պետության համար այն տեղեկատվական և գործողությունների հաջորդականությունն է ապահովում, որի վրա հիմնվելով՝ եկամուտների բաշխման հիմնական սուբյեկտներ՝ պետությունը և շուկան կառուցում են իրենց վարքագիծը:

Առաջարկվող մեխանիզմը հիմնվում է Ազգային հաշիվների համակարգի վրա, որը վերածելով փուլային տրամաբանական կապերի ներկայացրել ենք եկամուտների ձևավորումից մինչև դրանց վերջնական սպառման և համախառն խնայողությունների վերածման շղթան, ստանալով մեկ միասնական եկամուտների բաշխման գծապատկեր:

Այսպիսով՝ բնակչության դրամական եկամուտների արդյունավետ բաշխվածություն ապահովելու խնդիրը պահանջում է լուրջ պետական քաղաքականություն, քանի որ այն բազմագործոնային է և կապված է հասարակության բոլոր շերտերի հետ: Այս տեսանկյունից, ապահովել բնակչության դրամական եկամուտների արդար բաշխում ըստ քվինտիլային և դեցիլային խմբերի ոչ միայն եկամուտների, այլ նաև դրանց առանձին տարրերին ուղղված հստակ մշակված մեխանիզմների արդյունավետ գործունեության բավականին դժվար է, քանի որ կան մի շարք հակասական շահեր հասարակության առանձին շերտերի միջև: Մյուս կողմից, եթե հնարավոր լիներ մեկ հարվածով ապահովել եկամուտների հավասարաչափ բաշխվածություն, միևնույնն է մեկնարկային պայմանները և գույքային սեփականության տարբերություններն այնքան մեծ են, որ շատ կարճ ժամանակահատվածում այդ հարաբերակցությունը կրկին կփոխվեր ի օգուտ հասարակության վերին քվինտիլի, այսինքն՝ խնդրի խորությունը հենց սրանով է արտահայտվում, որ կարգավորման պարագայում անգամ երկրում ստեղծված տնտեսական լծակների և ոլորտների կենտրոնացվածությունը թույլ չի տա երկար ժամանակ պահել եկամուտների նորմալ բաշխվածություն:

Եզրակացություններ *բաժնում ատենախոսության թեմայի շրջանակներում դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան արված ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ, ինչպես նաև առաջ քաշված հիմնախնդիրների լուծմանը նպաստող մի շարք առաջարկություններ.*

1. Եկամուտ հասկացությունը լայն իմաստ ունի, որի բնորոշմանն անդրադարձել են տարբեր տնտեսագետներ՝ տալով բնորոշումներ տարբեր տեսանկյուններից, սակայն այս ամենի հետ մեկտեղ տրամաբանական է նաև այդ կատեգորիայի առավել

ընդլայնված բնորոշում տալու գաղափարը, քանի որ վերջնական արդյունքում ժամանակակից աշխարհում այնքան շատ ֆինանսական գործիքներ են ավելացել, որ ավանդական բնորոշումների շրջանակներից եկամուտներ կատեգորիան սկսում է դուրս գալ, քանի որ ունի ավելի մեծ ընդգրկվածություն: Այսինքն՝ տնտեսագիտական կատեգորիաները լինելով կայուն որոշակի ժամանակահատվածում կարող են նաև փոփոխությունների ենթարկվել՝ պայմանավորված ժամանակակից տնտեսական զարգացումների հետ:

2. Եկամուտների բաշխման խնդրին տարբեր տնտեսագետների կողմից տարբեր դարաշրջաններում տրվել է տարբեր մոտեցում: Կարծում ենք, որ եկամուտների բաշխման մեխանիզմը չի կարող կիրառվել տարբեր ազգային տնտեսությունների համար: Դրա համար յուրաքանչյուր երկիր, մասնավորապես Հայաստանը՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից, մակրոտնտեսական ցուցանիշների միտումներից, պետք է կազմի ու իրագործի եկամուտների բաշխման հստակ ծրագիր՝ ելակետային ընդունելով Համաշխարհային զարգացման զեկույցում արտացոլված հավասար հնարավորություններ և զրկանքի բացարձակ բացառում սկզբունքները: Այս տեսանկյունից կարևորվում է նաև այդ քաղաքականության կառուցումն առանձին քվինտիլային և դեցիլային խմբերից ելնելով, քանի որ առանց հստակ մշակված կառուցվածքի և կոնկրետ թիրախային խմբերին ուղղված քաղաքականության ապահովել արդարացի բաշխում և միևնույն ժամանակ տնտեսական արդյունավետություն անհնար կլինի:

3. Եկել ենք նաև այն եզրակացության, որ «սոցիալական արդարություն», այսինքն՝ եկամուտների առավել հավասար բաշխում հնարավոր չէ, քանի որ վերջինս բերում է տնտեսական արդյունավետության նվազման: Շուկան և սոցիալական արդարությունը, որպես եկամուտների հավասարաչափ բաշխում, անհամատեղելի են: Կարծում ենք, որ եկամուտների արդար բաշխման համար պետք է որոշակիորեն միավորվեն 2 հիմնական սուբյեկտների՝ պետության և շուկայի գործառույթները: Այդ դեպքում կարելի է հասնել եկամուտների մոտեցմանն այն իմաստով, որ ծայրահեղ աղքատներ չլինեն, իսկ աղքատների տեսակարար կշիռն ընդհանուր ազգաբնակչության մեջ քիչ տեսակարար կշիռ կազմի: Այդ առումով, առաջարկում ենք Հայաստանում հստակ տարանջատել NACE համակարգով դասակարգված տնտեսության ճյուղերն ըստ ՀՆԱ-ի արտադրական եղանակի, ինչպես նաև հաշվի առնելով յուրաքանչյուր ճյուղում ներգրավվածությունը և աշխատավարձերի բարձրությունը, տնտեսական գործունեությունից ելնելով ստացվող զուտ եկամտի մեծությունը՝ տնտեսական քաղաքականությունը կառուցել աշխատավարձերի, արտադրողականության, ինչպես նաև զբաղվածության համադրական մեխանիզմներ կիրառելով:

4. Պետությունը բնակչության դրամական եկամուտների բաշխումը պետք է իրականացնի այնպիսի ուղիներով, որոնք կնպաստեն «սոցիալական արդարության սկզբունքի» իրագործմանը, որ ավելի շատ գիտելիքներ ունեցողը, ձեռնարկատիրական ունակությունների տիրապետողը, ավելի շատ և լավ ռեսուրս ունեցողը հայտնվի ավելի

լավ տնտեսական վիճակում, և ընդհակառակը, ու միաժամանակ պահպանվի սոցիալական արդարության սկզբունքի մյուս կողմը՝ մարդասիրական բնույթի սոցիալ-տնտեսական հավասարությունը, որը ենթադրում է նաև հավասար մեկնարկային պայմաններ, իսկ հասարակության ավելի պակաս ունակություններով անդամների համար՝ նվազագույն կենսամակարդակի ապահովում: Այս ամենի հետ մեկտեղ նաև ընկալելի է այն փաստը, որ բավականին բարդ է իրավիճակը մեկնարկային պայմաններ ապահովելու տեսանկյունից, քանի որ խորացված անհավասարաչափ դրամական եկամուտների բաշխվածության դեպքում առավել մեծ բարդությունների հետ է կապված միջին խավի ձևավորման և քվինտիլային ստորին 2 կամ դեցիլային ստորին 4 խմբերում կենսամակարդակի նվազագույն պայմանների ապահովումը:

5. Հայաստանում 1998թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում աղքատության միտումների ուսումնասիրությունը կարլի է բաժանել երկու փուլի, քանի որ 1998-2008թթ. ընկած ժամանակահատվածում աղքատությունը Հայաստանում կայուն կերպով նվազել էր: Դեռ ավելին 2008թ.-ի հոկտեմբերին փորձ արվեց ԱՀՌԾ-ից անցում կատարել Կայուն զարգացման ծրագրի, սակայն հաշվի չէին առել պետական կառավարման մարմիններն այն հանգամանքը, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը խիստ բացասական դրսևորումներ է իր հետ բերելու ՀՀ տնտեսության համար՝ ընդհուպ մինչև ՀՆԱ-ի 14.1 տոկոսանոց անկում: Այսինքն՝ խախտելով աղքատության նվազման կայուն միտումները, Հայաստանը կրկին մի քանի քայլ հետընթաց կատարեց, և աղքատության միտումները մոտեցան մինչև 35%-ի, դա նշանակում էր, որ 2009թ.-ից հետո ընկած ժամանակահատվածը պետք է դիտարկել որպես նախկինում արձանագրած դրական միտումների վերականգնման ժամանակա-հատված, որն ի դեպ, մինչ օրս չի ապահովել: Այս տեսանկյունից առաջակում ենք. խիստ հետևողական քաղաքականություն իրականացնել թույլ չտալու համար բնակչության բևեռացման խորացում, և կիրառել առավել կոշտ մոտեցումներ հասարակության վերին ամենահարուստ դեցիլային և քվինտիլային խմբերի նկատմամբ, ինչպես նաև արդյունավետ հարկաբյուջետային մեխանիզմների միջոցով ապահովել միջոցների վերաբաշխում:

6. Հայաստանում եկամուտների անհավասարություն խորացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է հետճգնաժամային զարգաց-ման ժամանակահատվածի համար մշակել տնտեսական կայունություն և ցածր խոցելիություն ունեցող աղքատության հաղթահարման ռազմավարություն, ինչպես նաև փորձել հստակեցնել կայուն զարգացմանն անցնելու ժամանակահատվածը կամ միջակայքը: Այսինքն՝ հարկավոր է ունենալ ապագայի զարգացման հստակ տեսլական, որը հնարավորինս չի ենթարկվի ներքին և արտաքին տնտեսական ցնցումների: Այս համատեքստում կարևոր նշանակություն կունենա բնակչությանը կոնկրետ հիմնական տարիքային խմբերի առանձնացնելը, և յուրաքանչյուր խմբի համար որոշակի նպատակային քաղաքականություն մշակելը, քանի որ արտագաղթի բարձր տեմպերը

հանգեցրել են բնակչության կառուցվածքային լուրջ տեղաշարժերի, որի արդյունքում տնտեսապես ակտիվ բնակչության մրցունակությունն անկում է ապրել:

7. 2004-2011թթ.-ին ամբողջական եկամուտների կազմում ավելացել է դրամական եկամուտների մասնաբաժինը: Քաղաքային և գյուղական բնակչության գերակշռող եկամուտներն են համարվում վարձու աշխատանքը, պետական թոշակներն ու նպաստները: Ինքնազբաղվածությունը կրճատվել է, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ պետք է ստեղծվեն խթանիչ միջոցներ ներդրումային դաշտի ընդլայնման և արտոնյալ պայմաններ ապահովվեն հարկային քաղաքականության ոլորտում: Բնակչության եկամուտների նման կառուցվածքային տեղաշարժերը, ինչպես նաև տրանսֆերտներից կախվածությունը ստիպում են ենթադրել, որ պետական քաղաքականությունը պետք է կառուցվի այն գաղափարախոսության վրա, որ եկամուտների արդարացի բաշխումը ոչ թե պետք է ապահովեն նպաստները, կենսաթոշակները և տրանսֆերտները, այլ աշխատավարձերը և ինքնազբաղվածության արդյունքում ստացված եկամուտները:

8. 2008-2009թթ.-ին ՀՀ-ում եկամուտների անհավասարության ցուցանիշները, գործակիցներն արձանագրել են եկամուտների անհավասարության աճ, բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելացել է, դա նշանակում է, որ եկամուտ-ների անհավասարությունը հանդիսանում է դեռևս լուրջ հիմնախնդիր: Այս միտումները, որոշակի դրական տեղաշարժեր արձանագրելով, պահպանվել են նաև հետճգնաժամային 2010-2011թթ. ընթացքում, որը փաստում է տնտեսության դանդաղ տեմպերով վերականգնման մասին, իսկ եթե այս միտումները դիտարկում ենք դոլարա-յին արտահայտությամբ 2008թ.-ի ՀՆԱ-ի ցուցանիշների հետ համադրելով, ապա ակնհայտ է դառնում, որ անգամ 2012թ.-ի տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի պարագայում ՀՀ տնտեսությունը և հետևապես եկամուտների բաշխվածությունը չի վերադառնա 2008թ.-ի մակարդակին, և սա այն պարագայում, երբ արտաքին պարտքի ցուցանիշը այս տարիների ընթացքում գրեթե եռապատկվեց և մոտենում է 3.5 մլրդ ԱՄՆ դոլարի:

9. Դրամական եկամուտների կառուցվածքն ըստ դեցիլային խմբերի, ցույց է տալիս, որ 2010թ. առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների համար եկամտի հիմնական աղբյուր են հանդիսանում պետական տրանսֆերտները՝ 52.2%, 2010թ.-ին տասներորդ դեցիլային խմբի համար՝ 7.7%: Բնակչության եկամուտների քվինտիլային բաշխման տվյալներից երևում է, որ 2010թ.-ին առավել քիչ եկամուտներ ստացող բնակչության առաջին խմբի և առավել շատ եկամուտներ ստացող 5-րդ խմբի եկամուտների հարաբերակցությունն աճել է և 2010թ.-ին 2009թ.-ի համեմատ ավելացել է մոտ 2 անգամ: Այս առումով առանձին քվինտիլային և դեցիլային խմբերի շուրջ տարվող հարկային քաղաքականությունը պետք է վերանայել (Ֆրանսիայի օրինակով) և դեցիլային վերին երկու խմբերի նկատմամբ կիրառել կոշտ հարկային մեխանիզմներ և հարկման դրույքաչափեր, իսկ վերջինիս արդյունքում ստացված միջոցները հետագայում բյուջետային քաղաքականության (ծախսային) միջոցով նպատակաուղղել հասարակության խոցելիության բարձր մակարդակ ունեցող խավերին:

10. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում վերջին տարիներին գերակշռող էին անուղղակի հարկերը, հատկապես ԱՀՀ-ը, որն ավելի շատ ազդում է ցածր եկամուտներ ունեցող սուբյեկտների վրա և բերում աղքատության խորացման: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում այս միտումները փոփոխվեցին՝ պայմանավորված առանձին հարկատեսակների ՀՆԱ-ի մեջ ունեցած մասնաբաժինների կառուցվածքային տեղաշարժերով: Այս տեսանկյունից, կարևոր է հարկային եկամուտների ավելացումն աղքատության հաղթահարման գործում: Հետևելով զարգացած երկրների փորձին՝ առաջարկում ենք հարկային եկամուտների ձևավորման համակարգում կիրառել այնպիսի գործիքներ, որոնք կխորացնեն առկա կառուցվածքային տեղաշարժերը՝ մեծացնելով ուղղակի հարկերի մասնաբաժինը, քանի որ այս պարագայում տնտեսությունը ճգնաժամերի նկատմամբ դառնում է առավել քիչ խոցելի, իսկ սոցիալապես անապահով խավն առավել պաշտպանված:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Միսակյան Ա. Ս., «Եկամուտ հասկացության և դրա բաշխման հարցի շուրջ», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր), գիրք 2, ՀՀ ԳԱԱ, Երևան, «Գիտություն» հրատ., 2011, էջ 343-345:

2. Միսակյան Ա. Ս., «Բնակչության եկամուտների անհավասարության գնահատման եղանակները և դրանց առանձնահատկությունները ՀՀ-ում», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր), գիրք 2, ՀՀ ԳԱԱ, Երևան, «Գիտություն» հրատ., 2011, էջ 346-350:

3. Միսակյան Ա. Ս., «Աղքատության ձևերը և դրսևորումները», «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 1 (139), հունվար 2012, Երևան, էջ 38-39:

4. Միսակյան Ա. Ս., «ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխման կատարելագործման ուղիները սոցիալական արդարության տեսանկյունից», Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու -1(13)-Երևան «Անանիա Շիրակացի» համալսարան հրատ. 2012, էջ 110-114:

Мисакян Армине Серёжаевна

Проблемы справедливого распределения денежных доходов населения в Армении

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита состоится 7-го июня 2013г. в 13^{30} часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономоке действующего в ЕрГУ по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

Резюме

Диссертация посвящена проблемам справедливого распределения денежных доходов в Армении.

Проблема справедливого распределения доходов существует на протяжении всей истории человечества. В течение веков в центре внимания экономистов, политологов находятся вопросы неравенства, распределения доходов, бедности, относительно концептуальных решений которых выдвинуты многочисленные подходы, взгляды, гипотезы, однако еще ни одному государству не удалось добиться их полноценного решения и в лучшем случае был обеспечен высокий уровень развития человеческого общества, к которому сегодня стремятся все развивающиеся страны.

Объектом исследования являются денежные доходы населения, причины неравенства в их справедливом распределении, методы оценки, бедность и пути государственной политики по ее преодолению, а предметом – проблемы справедливого распределения денежных доходов населения, пути и механизмы их решения в РА.

Цель и задачи диссертационного исследования. Основной целью диссертационной работы являются исследование и анализ концептуально- методологических проблем справедливого распределения денежных доходов населения РА, предложение на основе изучения мирового опыта научно обоснованных механизмов эффективного распределения и обеспечения социальной справедливости, а также разработка предложений, касающихся путей реализации политики справедливого распределения на основе изучения тенденций распределения денежных доходов.

В соответствии с поставленной целью в диссертационной работе поставлены и решены следующие основные задачи:

- изучить понятие доход, представить его различные толкования и источники формирования доходов населения;
- в наиболее обобщенной форме представить учения о распределении доходов населения и виды доходов;

- представить существующие концепции и теории о социальной справедливости в контексте современных экономических развитий;
- представить методы оценки неравенства денежных доходов населения, а также проанализировать причины неравенства доходов населения РА;
- проанализировать проблемы неравномерного распределения денежных доходов населения РА в контексте квинтильного и децильного распределения доходов;
- представить направления совершенствования социальной политики распределения денежных доходов населения в РА, а также пути, рычаги и механизмы государственного регулирования.

Научные результаты и новизна диссертационного исследования. Результаты диссертационной работы имеют теоретическую, методическую и практическую направленность, научная новизна которых выражена в следующих положениях:

- на основе различных трактовок категории «доход» дан своеобразный подход к его восприятию, согласно которому «доход – это конечный продукт деятельности человека в денежном и натуральном выражении, созданный благодаря использованию его физических, моральных, эмоциональных и интеллектуальных способностей в условиях рыночной экономики, который используется домашними хозяйствами на потребление и сбережение (инвестиции) в целях повышения собственного благосостояния»;
- обоснованы пути совершенствования социальной политики справедливого распределения денежных доходов населения РА в контексте применения эффективных механизмов государственного регулирования распределения чистых доходов по группам населения;
- на основе анализа причин неравенства денежных доходов населения РА в контексте квинтильного и децильного распределения доходов обоснована необходимость реализации политики, направленной на смягчение неравенства в распределении доходов по отдельным децильным и квинтильным группам;
- разработан механизм, отражающий принципы справедливого распределения доходов, где на макро-и микроуровне представлены последовательные и связующие процессы, необходимые для обеспечения справедливого распределения.

Armine Seryozha Misakyan

The Issues of Fair Distribution of Monetary Incomes of the Population in Armenia

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the Field of "Economics, Management of Economy and its Sectors" 08.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.30 on June 7, 2013, at the Meeting of Specialized Council in Economics 015 of the Supreme Certifying Committee

Adress: 52 Abovian St., Yerevan, 0009, Armenia.

RESUME

The dissertation thesis is related to the issues of fair monetary income distribution in Armenia.

The issue of fair income distribution has existed throughout the history of the humankind. During centuries the focus of economists, politicians was on income inequality, distribution, poverty issues and many hypotheses, views, and approaches were proposed to provide conceptual solution to the above stated issues. However, not a single nation in the world managed to provide the full set of solutions to those issues, but was able to ensure higher human development accumulation at the most, the goal that all developing nations strive to achieve.

The object of the research is to study monetary income of the population, the cause roots of unequal income distribution and, measurement methods and tools, poverty reduction state policy directions; and the subject is to investigate the issues of equal monetary income distribution of the population and approaches and directions to resolve them in Armenia.

The main goal of the dissertation thesis and objectives: The main goal of the dissertation thesis is to study and analyze methodological and conceptual issues of fair monetary income distribution of the population of Armenia; based on the study of the best practices worldwide to propose efficient distribution and social justice ensuring mechanisms grounded on the theory; and, by studying the trends observed in the monetary income to propose possible policy implementation directions for ensuring equal distribution.

In order to meet the above-stated goal the dissertation thesis defined the following objectives that were addressed in the thesis:

- To study the term "income", and provide various interpretations of the term and income sources of the population;
- To illustrate various theories and forms of income distribution of the population in details;
- To present the concepts and theories of social justice in the context of modern economic developments;
- To present various methods to measure monetary income inequality, and analyze the cause roots of income inequality in Armenia;
- To analyze the issues of unequal distribution of monetary income of the population of Armenia based on income deciles and quintiles;
- To present approaches to improve the social policy, state regulation directions, leverages and mechanisms to ensure better income distribution in Armenia.

Scientific results and the novelty of the dissertation: The results of the dissertation thesis have theoretical, methodological and practical applications the novelty of the thesis is reflected in the followings:

- Based on various interpretations of categories of income a general approach was adopted and a specific approach was proposed: "Income, in the market economy, is the estimate of the final outcome produced by using physical, moral, emotional, and intellectual abilities of an individual in monetary and non-monetary expression, that is used by households for consumption and saving reasons (investments) to improve own wellbeing";
- In order to ensure fair income distribution, improvement directions of the required social policy were justified in the context of applying state regulation mechanisms for net income group distribution;
- By analyzing the cause roots of the income inequality in Armenia within the context of income deciles and quintiles, the necessity for implementing targeted policy was justified in order to smooth unequal distribution of income among various income groups;
- A mechanism was designed based on the principles of equal income distribution that presents a clear order of required consecutive and related procedures on macro- and micro-levels in order to ensure fair distribution.